

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԱՄԱՐԱԳՈՐԴ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՅՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՎԱՅ 1899 ԹՎԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(27-րդ ՏԱՐԻ)

ԴՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԴՐԻ

«ՄՇԱԿ» ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄԱՅՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ:

ԲԱՅՎԱՆՈՐԴԱԳՐՈՒՄ: «Մշակ» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի ամսականը՝ 1 ռուբլի:
ԱՐՏԱՍԱՀՄԱՆՆԱԿ ԲԱՅՎԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ: Ամբիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 ռուբլի. եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի:

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՐԱԳՐԱՄԱՅՈՎ (Բաղրամյան և Բարսեղյան փողոցների անկիւն):
Կայսրութեան ուրիշ քաղաքներէ «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելու, պէտք է գրվել Տիֆլիսի հասցեով. ТИФЛИСЪ, редакция „МШАКЪ“. Իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien „MSCHAK“.

ԱՊՐԱՊԵՏԱԲԵՐՆԵՐԻ ԲԱՅՎԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԶԵ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ:

Անթառամ Կարապետեան, Եղիսաբէթ Մելքոնեան, Յովհաննէս և Յակոբ Յակոբեան Զահանեանցները սրտի ցաւով յայտնում են՝ առաջինը իր թանկացին ամուսնու, երկրորդը՝ իր տաղը, երրորդը ու չորրորդը իրանց սիրելի եղբոր՝

Մ Ի Ն Ա Ս Յ Ա Կ Ո Ւ Բ Ե Ա Ն Ի

մահը, որ տեղի ունեցաւ նոյեմբերի 2-ին, և ինչպէս են ազգականներին ու ծանօթներին՝ չնոր՝ բերել յուզարկաւորութեան, որ տեղի կունենայ նոյեմբերի 5-ին, հինգշաբթի, իր բնակարանից, Նովի-Արսէնայի փողոց, տուն № 4, դէպի ս. Կարապետ եկեղեցին, և այնտեղից դէպի Թովմանքը: Ամբիքը կը լինի չորեքշաբթի, երկուշաբթի ժամը 5-ին: 2—2

ԲՈՎԱՆՎԱԿՈՒԹԻՒՆ

Ինչ հանելուկ է. Դոկտոր Վաղեմար Բէլլի.—
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Խաղաղութեան կոնֆե-
րենցիա. Մատենադարան: Հայոց ներկայա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԶՆՒԱՆՈՒՄ

(ՅԷ ՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ)

III

Այսպիսով անցաւ տասն օր: Իմ վիճակի մէջ ոչ մի փոփոխութիւն տեղի չունեցաւ: Ամեն գիշեր իմ դարձուրդի շղթան հազիւ քաշ տալով ես տարվում էի վերեւ, ինձ սովորական եղա-
նակով ծծում էին՝ յանգանքս խոտովանելու համար, և քաշ տալով, էլի եւս բերում՝ բանտն էին դրում իսպառ ուշաթափ: Վերջին օրերը ես զգացի, որ եթէ էլի մի քանի օր այսպէս շա-
րունակվի իմ դրութիւնը, ես անպատճառ կը մեռնեմ: Սակայն օգնութիւնը հասաւ. կինս վա-
ճառել էր իմ խանութի բոլոր ապրանքը, մի խոշոր գուճար էր տուել իմ ընկիւնին, միւս օրն ինձ ազատեցին շղթաներից և հանեցին բանտի ընդհանուր բաժինը տարան, ուր կեանքը հա-
մեմատաբար աւելի տանելի էր:

Բանտի այս ընդհանուր բաժինը երկու յար-
կից բաղկացած էր ընդարձակ շինութիւն էր, թէ և հոտած, կեղտոտ, միջատներով լի, բայց համեմատելով իմ գնդանի հետ, սա արքայու-
թիւն կարող էր համարվել և ես երջանիկ հա-
մարեցի ինձ, որ վերջապէս դուրս եկայ այն դժուրեցի: Այստեղ գտնէ մարդիկ կային, լայն արձակ տեղ կար, կարելի էր ունենալ ձգել, սեկվիլ ընել. անկողին ի հարկէ չը կար, բայց մի փաթիլ ճարվում էր՝ տակներս դնելու հա-
մար, այդ էլ մի բան է, և ես շատ գոհ էի: Բանտն

ցումները Բաղրամ. Ներքին լուրեր.—ԱՐՏԱԳԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Աստուրայից. Արտաքին
լուրեր.—ՀՆՈՒԱԳՐՈՒՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱ-
ՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Զննանում:

էլ մի հետաքրքիր աշխարհ է, ուր ամեն տեսակ
մարդիկ ապամայ կենակցութեան են դատա-
պարտված, և մի հոգեբանի դիտողութիւնները
համար առատ ու հետաքրքիր նիւթ է ներկայա-
ցնում: Մարդկային հոգին նման է ծովին, որի
մակերևոյթը խաղաղ է, սիրուն, հարթ-հաւա-
սար, բայց իր ներսում, յախտնական խաւարի
և խորհրդաւոր անյայտութեան մէջ բազմաթիւ
պատկերներ, զրաշալի երեւոյթներ ունի թաղ-
ցած: Անձ մի բանտարկեալ. մտայլ ու անհամ-
բոյր է նրա դէմքը, խոժու, նոյն իսկ թունա-
ւից են աչքերը, իսկ և իսկ աւազակ, չարագործ:
Անձ մի ուրիշը. դէմքը ժպտուն, պայծառ ճա-
կատ, գրաւիչ աչքեր. անձ մի երրորդը՝ վշա-
հար, մտադրաւոր դէմք ունի, լուռ է, բայց ոչ ոք
սիրտ չի անում խօսել հետը, կարծես թաղ-
ված հրաբուխ լինի. մի ուրիշը՝ յանդուգն ու
անվախ, կարծես իր տանը լինի, բայց ու շանթ
ունի աչքերի մէջ, արհամարհում է ամեն ինչ:
Եւ սրանք բոլորն էլ բանտարկեալներ են, բո-
լորն էլ օրէնքով՝ աւելի կամ պակաս չափով
յանցաւոր են ճանաչված: Բայց ով է իսկական
յանցաւորը, ոճրագործը, և ով է անմեղ, ով է
կոչումով ի ընէ չարագործ, և ով պատահա-
բին, չըբանի, տեղական ձախող պայմանների
գոհ. ինչպէս իմանալ, ինչպէս որոշել: Այստեղ
էլ մարդիկ ապրում էին բանտին յատուկ մի
կեանքով, առում խոտով էին, զբօսում, ուրա-
խանում էին, խաղեր էին սարքում, պարում
էին, երբեմն էլ կոպում էին: Ես ամենից շատ
վախենում էի այդ կռիւներից, որովհետեւ չէի
առաջին օրը ես նկատեցի, որ կռիւները ժա-
մանակ բանտարկեալներէջ ոմանք իրանց զգես-
տի ծածուկ տեղերից փայլուն դանակներ էին

ԻՆՉ ՀԱՆՆԵՒՈՒԿ Է

Գիւղ-Հօլի ճառի մէջ լորդ Սօլսբերի
յայտարարեց, որ Անգլիան շատ գոհ է իր
ձեռք բերած աջողութիւններից, ոչ մի
անխաղաղաւէր ձգտում չունի և առհա-
սարակ չէ ուզում քաղաքական բարդու-
թիւններ յարուցանել: Այս խօսքերն ար-
տասանվում էին այնպիսի ժամանակ, երբ
Անգլիան տեղադրւում էր Եւրոպայի առաջ
տանում իր պատերազմական պատրաստու-
թիւնները, որոնք ամբողջ եւրոպայի ու-
շադրութիւնն են գրաւել: Կարծես կամե-
նալով բացատրել այդ հակասութիւնը, որ
գոյութիւն ունի իրականութեան և իր
հանգամանցող յայտարարութիւնների մէջ,
առաջին միջնորդն ասաց. «Ինձ կասեն, որ
եթէ այժմ խօսք չը կայ ոչ Կրետէի, ոչ
Սիրիայի, ոչ Եգիպտոսի մասին, էլ ինչու
են այս պատրաստութիւնները: Այդ հար-
ցի պատասխանը գործերի այժմեան դրու-
թեան մէջ է: Այսպիսով, բրիտանական կա-
ռավարութեան զեկալը խոտովանում է,
որ Անգլիան ինչ որ սպառնական երեւոյթ է
տեսնում գործերի այժմեան դրութեան
մէջ և պարտք է համարում պատրաստ
լինել:

Մի քանի ժամանակ առաջ քաղաքական
աշխարհն այնպէս էր կարծում, թէ անգ-
լիական ծովային ահաւոր ոյժերը շար-
վում են՝ Փրանսիայի վրա ճնշում գործե-
լու համար: Բայց այդ երեւոյթութիւ-
նը այժմ հիմք չունի, քանի որ Փրան-
սիան, բոլորովին մենակ մնալով Փաշոպայի
հարցում, ստիպւած եղաւ տեղի տալ և
Անգլիան լիւր-լի բաւարարութիւն ստացաւ:
Եւ այնուամենայնիւ, չը նայած որ այլ ևս
գոյութիւն չունի աֆրիկեան հարցը, անգ-
լիական նաւերը, զօրքերը դարձեալ շար-
նակում են իրանց պատրաստութիւնները:
Այժմ երեւոյթութիւնները պտրտում են
ուրիշ քաղաքական հանգամանքների շուր-
ջ: Ոմանք ասում են, թէ Անգլիան ու-
զում է ցոյց տալ աշխարհին՝ թէ ինքը
ծովային առաջին պետութիւն է, միւս-
ները հաւատացնում են, թէ Ֆրանսիան
կղզիները միջազգային բարդ հարց են յա-

րուցանում: Ինչպէս յայտնի է, ներկայումս
Պարսկում գործում է ամերիկո-սպանիա-
կան յանձնաժողովը, որ պիտի որոշէ խա-
ղաղութեան վերջնական պայմանները: Ա-
մերիկայի լիազօրները պահանջում են, որ
Ֆրանսիան բոլոր կղզիները Միացեալ-Նա-
հանգներին տրվեն. և սպանիական կառա-
վարութիւնը ոչ մի կողմից աջակցութիւն
չը գտնելով այդ պահանջին դիմադրելու
համար, ինչպէս երևում է, վերջ ի վերջոյ
պիտի ընդունէ յաղթողի այդ ծանր պայ-
մանը: Չինական գործերի մէջ Ամերիկայի
մեծ հանրապետութիւնը ցոյց տուեց, որ
ինքը չէ կարող անտարբեր մնալ ծայրա-
գոյն Արեւելքում տեղի ունեցող անցքերի
վերաբերմամբ: Եւ եթէ Ֆրանսիան կղզի-
ները դառնան Ամերիկայի սեփականու-
թիւն, այն ժամանակ ետնկները, հիմնվե-
լով այդպիսի մի ամուր յենակետի վրա,
պիտի միջամեն եւրոպական քաղաքակա-
նութեան մէջ, որի համար ծայրագոյն
Արեւելքը այնքան մեծ նշանակութիւն ու-
նի. իսկ այդ միջամտութիւնը չէ կարող
ցանկալի լինել եւրոպական շահերի տե-
սակետից: Այդ հանգամանքը մեթ կեր-
պով շօշափեց լորդ Սօլսբերի իր ճառի
մէջ: Խօսելով այն հօր գերի մասին, որ
Ամերիկան սկսել է խաղալ եւրոպական
պետութիւնների մէջ, նա ասաց. «Այս
կարեւոր հանգամանքը հազիւ թէ նը-
պատէ խաղաղութեան գործին, թէ և ես
համոզված եմ, որ նա յամենայն դէպս կը
նպաստէ Անգլիայի շահերին: Եթէ յիշենք
և այն հանգամանքը, որ Միացեալ-Նա-
հանգներում վերջին ժամանակներս նոյն
իսկ պաշտօնական անձինք չեն թաղցնում
իրանց համակրանքը դէպի Անգլիան, այն
ժամանակ գուցէ և հաւանական կը լինի
այն երեւոյթութիւնը, թէ Ֆրանսիան
կղզիների հարցում Ամերիկայի ետեւում
կանգնած է Անգլիան, որին որպէս թէ
պիտի հասնէ այդ հարուստ աւարից մի մեծ
բաժին, եթէ ոչ ամբողջը:

Բայց, կրկնում եմ, այս բոլորը երեւ-
ոյթութիւնների սահմաններից չէ դուրս դա-
նալ: Կրկնումս խաղաղութեան անտե-
ղեակ աշխարհի համար հանելուկ են մնում

«Ես իրաւունք ունիմ, իմ պատիւն էր անադ-
ված, այնպէս չէ», մտածում էր նա: Մի քանի
ամիս բանտում մնալուց յետոյ, նա փախել էր
և երկար ժամանակ թափառական կեանք էր
վարել: Իր կեանքի այդ ատանդական շրջա-
նում նա ինքնապաշտպանութեան ժամանակ
սպանել էր երկու փօշիկ իր սեփական տան
մէջ, ինքն ապա աշուղեղել էր փախելի, բայց
նրա փոխարէն անմեղ եղբայրն էր բանտարկվել,
որպէս աւաղակին ապատան տուող: Լսելով
անմեղ եղբոր բանտարկութեան լուրը, նա իս-
կայն վճռել էր իրան իշխանութեան ձեռք
յանձնել եղբորն ազատելու համար. բայց հենց
այդ ժամանակ նա իմացել էր, որ վերջին դէպ-
քում, երբ փոխներքի իր տեղը գտել էին, մատ-
նող իր մի ընկերն է եղել, այդ պատճառով
նա երկար ժամանակ սկսել էր հնարներ որո-
նել այդ դաւաճան ընկերով և նա առանց իր վրէժ-
խնդրութեան յաղուրդ տալու, ստիպված էր ե-
ղել բանտ մտնել: Բայց նրա յոյսերը չէին ի-
րականացել. իշխանութիւնը նրան բանտարկե-
լով, եղբորը ազատութիւն չէր յնորհել, նա էլ
բանտումն էր: Միխայիլն օրտի առանձին ցաւով
պատմեց վերջին հանգամանքը: Իրան դատա-
պարտել էին արդէն, իսկ եղբոր մասին կայա-
նալիք վճռից նա տեղեկութիւն չունէր:

«Ինձ դատապարտել են 101 տարւայ բան-
տարկութեան, սա ինձ առանձին ցաւ չի պա-
ճառում, ես առանց այդ էլ իմ կեանքը կորած
էի համարում, աւելացրեց նա. ինձ տանջողը
մէկ այս խեղճ, անմեղ եղբորս բանտարկու-
թիւնն է և մէկ էլ այն՝ որ չը կարողացայ դա-
ւաճան ընկերիցս վերջնական լինել: Որովհետեւ

Ա. Ահարոնեան

ներկայ մին է, որ Ռուսաց մի պիես ներկայացվում է Վիեննայում:

Այժմ հոս է գտնվում մի երկրորդ մեծ դերասանուհի՝ Իլիա Պալմայ (Ilka Palmy), ազգա. ունգարացի, որը մի քանի տարի Լոնդոնի առաջնակարգ թատրոններում աջողությամբ խաղալի է եղել, այժմ Վիեննա Theater an der Wien ներկայացումներ էր տալիս: Դժուար է որոշել նրա տաղանդն է մեծ, թե զեղեցիկունը... Անկասկած, երկուսն էլ մեծ են, գոած աջողությունն էլ:

Գերմանացի հայազետ պ. Արտուր Լայստ, հայ բանաստեղծներից և ժողովրդական երգերից ընտրված կտորներ՝ ոտանավորով՝ գերմաներեն թարգմանելով, հրատարակած է մի փոքրիկ հատորի ձևով: Գառառ-Գալիպայի, Նալբանդյանի, Գուրեանի և Պեշեկյանի քերթումների ըստ մեր աչքին ընկած 20-ականների անհամ ոտանավորները: Միև ընտրություններն ընդհանրապես լավ են: Թարգմանիչը շատ լավ է առիթ մանաւանդ ժողովրդական երգերն առնելով: Իր յառաջաբանին մէջ մի ընտիր յորդոր է տալիս հայ բանաստեղծներին, ասելով որ, եթե լավ բան արտադրել կը կամենայ, ժողովրդական երգին պէտք է հետևեն Դա շատ ճիշդ է, Գէտեյի և Հայնէի նման հականերն անգամ այդպէս արած են: Սպեյաթ-Նովայից էլ մի քանի զեղեցիկ կտորներ կան թարգմանված: Պ. Լայստի թարգմանությունը լավ է, բայց շատ կրտսերական: Օրինակ, կուռնիկն երգը (սկզբ. ուսուցիչ, ուսուցիչ կուռնի, ուսուցիչ կուռնի, ուսուցիչ կուռնի, ուսուցիչ կուռնի) այնպէս է թարգմանել, որ բնագրին սիրուն, գիշերով, անգարը ողին կորսվել է բոլորովին: Երևակայեցէ՛ք «Կուռնիկն» երգը եղիշէի գրաբանին վերածված, — քիչ բան դուրս կը գայ...

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Կ. Պոլսի ֆրանսիական դեսպան Կամբոն արդէն տեղափոխվել է Լոնդոն: Այժմ, ըստ երեւոյթի, երկու պետությունների մէջ դիվանագիտական յարաբերությունները խզվելու վրա են և պատճառը հետևանքն է: Հայկական կոտորածների ժամանակ սպանվեց ֆրանսիացի բանակայ Սալվատորէ. այդ եղեռնագործությունն թելադրողն էր գնդապետ Մուսա-բէյ, որ ֆրանսիական կառավարության ստիպմամբ հետաքննվեց պաշտօնից: Այժմ Մուսա-բէյ նորից ընդունված է ծառայության մէջ: Ուստի, ինչպէս հայտնի է «Frankfurter Zeitung» լրագրի, Բ. Վուստացու ազգաբարձրին, որ ֆրանսիական առաջին զորքային չի նշանակել, նշանակել և չի պահանջի թողնել Պարիզում թիրաքացի դեսպան Մուսուս-բէյին, մինչև որ ֆրանսիական պահանջներին բաւարարվեն չը տրվեն:

— Եւրոպական ժողովարները դիմեցին Կրետէի քրիստոնեայ ազգաբնակչության մի յայտարարություն, որի մէջ ասված է, «Թիրաքացի զորքերի հետևանքը պարտաւորություն է դնում քրիստոնեայ ազգաբնակչության վրա՝ եղբայրաբար ձեռք մեկնել մուսուլմաններին, որոնք գրտնվում են ժողովարների պաշտպանության տակ, ամեն մի յարձակում մուսուլմանների վրա, պէտք է համարվի իբրև յարձակում միջազգային զորքի վրա»:

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 նոյեմբերի: Ներքին գործերի մինիստրը կարգադրեց՝ արգելել «Новое Время» լրագրի հատով ծախելը:

Մեծ Իլիան Նիխայիլ Նիխայիլիչ Դրիմից վերադարձաւ Պետերբուրգ: Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆեոդորովնայի հրամանով Կարմիր Խաչի զինվոր վարչությունն ուղարկում է սովատանի նախնային լրագոր ներկայացուցիչ շտաբեյնիսը և կազմակերպելու բարեգործական նպատաների գործը: Գլխավոր վարչությունը յատկապէս 200 հազար ռուբլի՝ հողաբու առաջին կարիքները անհրաժեշտությունից փնտրված տեղերում: Կարմիր Խաչի ընկերությունը չնորհակալութեամբ կընդունի ամեն մի նուէր՝ օգնություն ստոր գործի համար:

ՆԻՒԵՐՈՒՔ, 4 նոյեմբերի: Մոլային մինիստր Լոնգ հրամանագրեց՝ մինչև Սպանիայի վճիռը Ֆիլիպպեան հարցի վարչական, պարտատուի և պատերազմական նախ և պահել «Օրեգոն» և «Իովա» պատերազմական նաւերը Ռոյոլում:

ԺԸՆԵՎԱ, 4 նոյեմբերի: Լուսկէնի խնդրը տուեց՝ դատարանի վճիռը բեկանելու համար:

ՎԻԵՆՆԱ, 4 նոյեմբերի: Յունաց արքայորդի Գիորգի եկաւ այստեղ:

ՊԱՐԻԶ, 4 նոյեմբերի: Սենատ: Կոնստան առաջարկում է, որ այն անձինք, որոնք ենթարկվում են զինուորական դատարանի, իրաւունք

ունենան օգտվելու 1897 թի օրէնքից, այսինքն՝ որ ընտրվեան ժամանակ ներկայ լինեն պաշտպանները: Լեբը յայտնում է, որ կառավարությունը սկզբունքով ընդունում է այդ օրէնքը:

ՊԱՐԻԶ, 4 նոյեմբերի: Պատգամաւորների ժողով: Բուայէ մի առաջարկ է անում, նման Կոնստանի առաջարկին: Բուայէ յանկուրին է յայտնում, որ իր առաջարկը կարողանայ գործադրվել Պիկարի վերաբերմամբ, որը հայաձանքի ենթարկվեց այնպիսի փաստերի համար, որոնք, նրա ձեռքակալությունից յետոյ, կեղծ ձանաչվեցին: (Բազմաթիւ բողոքներ կենտրոնում և ալ կողմում): Բուայէ պնդում է անյետաձգման վրա: Ֆրէյսինէ պատասխանում է, որ Պարիզի նախնադպետը՝ Պիկարի վերաբերմամբ գործում է համաձայն օրէնքի, որը արգելում է մեղադրվողին յարաբերություն ունենալ պաշտպանի հետ: Ֆրէյսինէ համաձայն է այդ տեսակ խտուրթեան հետ, և ընդունում է Բուայէի առաջարկը, բայց առանց համաձայնվելու նրա պատճառաբանությունների հետ (ծափահարություններ): Անյետաձգման առաջարկն ընդունվեց:

ՊԱՐԻԶ, 4 նոյեմբերի: Վճռալինը ատենադորոշեց, որ Իրէյֆուսին շուտափոյթ կը հաղորդվի նրա գործի վերաբերման մասին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՈՍԱ

Նոյեմբերի 3-ին

Լոնգ-օնի վրա 10 ֆունտ արծէ	98	70	կ.
Բ-ժլէի վրա 100 մարկ	45	60	"
Պարիզի վրա 100 ֆրանկ	37	05	"
Պոլսի փոխարկ	—	—	"
Մարսայի կուսպոններ	—	—	"
Բորսայի դիսկոնտ	5 1/2	6 3/4	"
4 1/2 պետական բենտա	100 1/2	—	"
4 1/2 Կեթին փոխառութեան	99 1/2	—	"
3 1/2 պետ. Թղթ. ագն. կալ. բանկի	95 1/2	—	"
1 1/2 պետ. Թղթ. ագն. կալ. բանկի	100	—	"
Սեբէրի 5 1/2 առաջին փոխառութ.	296 1/2	—	"
Նոյի	268	—	"
3 1/2 պետ. Թղթ. ագն. կալ. բանկի	222 1/2	—	"
5 1/2 պետական երկաթուղ. բենտա	—	—	"
Պետերբ. քաղ. կր. ընկ. օր. 5 1/2	—	—	"
Մոսկովայի քաղաք. կր. օր. Կալիպոններ	100 1/2	—	"
Օր. Կալիպ	99 1/2	—	"
Թիֆլիսի	99 1/2	—	"
Թիֆլիսի կալ. բանկի 6 1/2	—	—	"
Նոյի	99 1/2	—	"
Փո. լոյսի կալ. բանկի 6 1/2	101	—	"
Նոյի	100 1/2	—	"

Խմբագիր՝ Ա.Լ.ԲԱՍՏԱՆԻ ԲԱԼԱՆԹԱՐ

Հրատար.՝ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԺԱՌԱՆԳՆԵՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԻՎԵՐՍԻՏԵՏԵՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մ ա ռ դ ա տ ա ռ № 1 գնացը դուրս է գալիս ԲԱՌՈՒՆԻ գէպի ԹԻՖԼԻՍ ցերեկվայ 4 ժամին և 15 րոպէին, Թ Ե Ֆ Լ Ե Ն է համուժ առաւօտեան 8 ժամ 38 րոպէին: Դուրս է գնում ԹԻՖԼԻՍԻ գէպի ԲԱՌՈՒՆ առաւօտեան 9 ժամ և 20 րոպէին, Բ ա թ ռ ու մ է համուժ երեկոյեան 8 ժամ և 52 րոպէին:

Մ ա ռ դ ա տ ա ռ № 3 գնացը դուրս է գալիս ԲԱՌՈՒՆԻ գէպի ԹԻՖԼԻՍ ցերեկվայ 10 ժամ 50 րոպէին, Թ Ե Ֆ Լ Ե Ն է համուժ երեկոյեան 5 ժամ և 9 րոպէին: Դուրս է գնում ԹԻՖԼԻՍԻ գէպի ԲԱՌՈՒՆ ԵՐԵՂԵՅԵԱՆ 6 ժամ 10 րոպէին, Բ ա թ ռ ու մ է համուժ առաւօտեան 7 ժամին:

Մ ա ռ դ ա տ ա ռ № 2 գնացը դուրս է գալիս ԲԱՌՈՒՆԻ գէպի ԹԻՖԼԻՍ առաւօտեան 8 ժամ 30 րոպէին, Թ Ե Ֆ Լ Ե Ն է համուժ երեկոյեան 8 ժամ 30 րոպէին: ԹԻՖԼԻՍԻ գէպի ԲԱՌՈՒՆ է դուրս գալիս՝ երեկոյեան 9 ժամ 15 րոպէին, Բ ա թ ռ ու մ է համուժ ցերեկվայ 12 ժամ 59 րոպէին:

Մարդատար № 4 գնացը դուրս է գալիս ԲԱՌՈՒՆԻ գէպի ԹԻՖԼԻՍ երեկոյեան 8 ժամ 40 րոպէին, Թ Ե Ֆ Լ Ե Ն է համուժ առաւօտեան 9 ժամ 55 րոպէին: ԹԻՖԼԻՍԻ գէպի ԲԱՌՈՒՆ է դուրս գալիս առաւօտեան 11 ժամ 20 րոպէին, Բ ա թ ռ ու մ է համուժ առաւօտեան 5 ժամ 42 րոպէին:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԻԵԱՆԻ

(Վուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ) Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՌՈՏ ԵՐԵՂԵՅԵԱՆ

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԻԵԱՆ—11—12 ժ. վարարու-ծութեան, վեներական (սիֆիլիս) և միլատեա. 5. Կ. Մ. ԶԻՆՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային 5.

Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆ—11—12 ժ. կանանց հիւանդ.

Ի. Ֆ. ՊՐՈՏԱՍԵՎԻԶ—12—1 ժ. ախանջի, կոլորի, բլիս և կրծքի 5.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1 1/2 ժ. ներքին և երկրային 5.

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—1 1/2—2 1/2 ժ. ներքին և մի-ատեական 5.

ԵՐԵՂԵՅԵԱՆ

Վ. Մ. ՄԱԽՈՎԻԼԱՆ—5—6 ժ. ներքին և երե-կային 5.

Ա. Ն. ՇԱՊԱՎԱԿ—6—7 ժ. նեարդային (ե-

րեկարաւոժութիւն), վեներական և մորթի 5. Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԻԵԱՆ—6 1/2—7 ժ. 5. Ի. ԲՈՒՆԵՆԿՈ Տիւնդանցու ընտրական և խորացուցական հետազոտութիւններ է ա-նում մէկի, խիթի, արեան, կաթի և այլն: Վճար 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի (Կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին: Հիւանդանոցի վերաւանդը՝ 46—150 Բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԻԵԱՆ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է Ազգագրական Հանդիսի

ԲԱՌՈՒՆԻ ԳՐԱՐՈՒԹԻՒՆԸ Լոյս է տեսել № 1, խի № 2 լոյս կը տեսնի զեկտեմբերին: Բաժանորդագիրն է՝ 3 ռ.

Դիմել՝ Երվանդ Լալայն. Թիֆլիս, Семина-рия Нерсисян. (Ե. 5.) 9—10

ԲՈՒՆԱՆԱՐԱՐՈՒՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴԱՆԵՐԻ

մանագրատար բ գ ի, կ ո լ ո Ր գ ի, ք թ ի և ա կ ա ն ջ ի հիւանդութիւններով: Առաւօտեան 9—12 ժ. Երեկոյեան 4—7 ժ. Գործիչների պրոսպ. № 28, տ. Աղամովի: 9—10

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի ԱՅՈ Մ Է Լ Ի Ք Ի Ա Ղ Զ Ի Կ Ը

(Պատմական վէպ, 755 էրես) Գիրք 1 ԲՈՒՐ. 30 ԿՕՊԷԿ (սովեկալ 2 ռուբլի)

Ծախվում է ԹԻՖԼԻՍԻՄ—հեղինակի մօտ («Մշակի» խմբագրատանը) և Կենտրոնական դրա-վաճառանոցում: ԲԱՌՈՒՆԻ—պ. Ներսէս Գալիկանցի մօտ, Ա. Ի. Աղամովի գրատնակ. ՇՈՒՇՈՒՄ—Բարաւո Տէր-Սահակեանցի գրավաճառանոցում:

Հեղինակի հասցէն՝ ԹԻՖԼԻՍ, редакция „Мшакъ“. 9—10

Годъ второй. ОТКРЫТА ПОДПИСКА НА 1899 ГОДЪ Годъ второй. на еженедельную литературно-политическую и научно-популярную газету

„РОССИЯ и АЗИЯ.“

(Подписной годъ съ 1 Ноября 1898 г. по 1 Ноября 1899 г.) Годовая цѣна безъ доставки 5 руб., съ доставкой и пересылкой—6 руб., за границу 7 руб., за полгода безъ доставки 3 руб., съ доставкой и пересылкой 4 руб., за границу—5 руб. Допускается разсрочка для годовыхъ подписчиковъ по 3 руб. въ два срока, или по 2 руб. въ три.

Адресъ Редакціи: КІЕВЪ, Паньковская, д. № 12. Газета дастъ въ теченіе года: 1) 50 номеровъ литературно-политической газеты; 2) 50 номеровъ „Научно-литературнаго отдѣла“, посвященнаго Востоку, еврейству, инород-цамъ, Кавказу, Туркестану и Сибири и 3) 4 книги приложенийъ подъ названіемъ „Альма-нахъ Россіи и Азіи“, въ который войдутъ:

I. Армения. Сборникъ статей различныхъ Русскихъ и иностранныхъ авторовъ объ Ар-меніи, ея исторіи, литературѣ и отрывки изъ произведеній Армянскихъ писателей.

II. Спиноза. Біографія и лучшія произведенія знаменитаго Еврейскаго философа-пан-теиста съ критическимъ комментариемъ.

III. I Томъ „Полнаго Собранія сочиненій“ знаменитаго романиста Георга Эберса, автора романовъ „Дочь Египетскаго царя“, „Императоръ“ и пр.

IV. Мориеръ. Мирза Хаджи-Баба Исфагани. Новый переводъ съ англійскаго по по-рученію Редакціи. (Эта книга была переведена въ сороковыхъ годахъ Барономъ Брам-беусомъ и представляетъ изъ себя романъ, состоящій изъ забавныхъ, юмористическихъ сценъ изъ жизни Востока вродѣ Жильблэза Лесажа.)

Всѣ годовые подписчики „Россіи и Азіи“ за прошлый годъ будутъ получать изданіе цѣлый годъ бесплатно. Оставшіеся экземпляры „Россіи и Азіи“ за прошлый годъ новые подписчики могутъ получить за 3 руб.

Объявленія—10 коп. строка корпуса. Редакторъ-издатель прив. доц. А. Н. ГРЕНЪ.

ՄԵՆԿԱԿԱՆ ՊԵՏԵՂԶ, ՌԻՍՈՒՄՆԵՐԱՆ ԵՒ ՊԵՆՍԻՆ

Մ. ՊԵՏՐՈՍԵԱՆԻ Ընդունվում են երկու սեռի երիտաներ և պատրաստվում՝ գրիմալիա, բնական և այլ դիրքներ մտնելու համար՝ ԲԱԵՄ, полиц. у.л. д. Кирѣва. (Ե. 5.) 10—15

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԵՅԼԻՑ ԲԱՌՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբա-թը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթիից,

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէյ, մտնելով Տրապէզոն, Սամսոն և Պոլս: Մեկնում է Բաթու-մից՝ չորեքշաբթի, 11/23 նոյեմբերի ԱՆԱՏՈԼ չորեքուր, նաւապետ ԲԱՆԿԻ: Եւ այսպէս շաբու-նակարար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին հայից յետոյ:

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գնեքով:

Ապրանքների և ծանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճին դիմել ընկերութեան գործակալատաներին:

ԲԱՌՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արսոն, Նաբէրէժնայա: ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդա-նեանին, Սիւնի փող. նախկին Արքեպիսկոպոսի ընտանաւոր: ԲԱՌՈՒՄ—պ. Ս. Դիլլարեանին, Կոլիւրեա-կնանայա ջրապարակ: ՆՕՎՈՐՈՍՈՒՅՈՎ—պ. Մելիքի չորեքշաբթի: (Ե. 5. 2.) 14—20

Լուսանկար Տէր-Ղենդեանի մօտ վաճառվում են

ԱՆԴՐԵԱՍ ԱՐԾՐՈՒՆՈՒ ՄԵՐԱԳԻՐ և ՓՈԳՐԱԳԻՐ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ, որ արժեն 1 ռ. 40 և 20 կոպէկ: Դիմել՝ Թիֆլիս, фотографу Теръ-Гевондянцу. 10—15

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՐԱՆՈՅՈՒՄ

- Տ ա խ վ ու մ ե ն ի Բ. Կ.
- 1) Լ. ՍԱՐԳՍԵԱՆԻ՝ «Այց Թիրաքացի Հայ-աստանին» (սակաւաթիւ) . . . — 60
 - 2) Լ. ՍԱՐԳՍԵԱՆԻ՝ «Ժողովրդի կրթու-թեան գործը մեզանում» . . . — 20
 - 3) Զ. Ս. ՄԻԼԼԻ՝ «Աղատութեան մասին» 1 20
 - 4) Ս. ԱՆԵՏԻՔԵԱՆԻ՝ «Իրանի լայն դատը» — 80
 - 5) Ս. ՍԱՐԳՍԵԱՆԻ՝ «Աղուլիցոյ բար-բաւը» 2 — 3—12

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԳՊՈՑՆ ԱՌԱՐՏԱԾ Մ Ի Ե Ր Ի Տ Ա Ս Ա Ր Դ

ցանկանում է հայերէնի և մասամբ ֆրանսերէնի դասեր ունենալ, ամենաձեռնառու պայմաններով: Դիմել՝ Ներսէս Ներսիսեանցին՝ ԲԱԵՄ, Никола-евскій переу., № 1, домъ Баранова. Երեկոյեան 6—7 ժամը: 5—5